ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ ենթակետի և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.07.2018թ. թիվ 13/15-Լ որոշմամբ հաստատված Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի 5–րդ կետի պահանջներով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդի որոշմամբ սահմանված Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպանների հաստիքների թվաքանակը (54),

նկատի ունենալով հանրային պաշտպանների մասնագիտացումները սահմանելու և հաստիքները տեղաբաշխելու անհրաժեշտությունը,

ի գիտություն ընդունելով Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. 2019 թվականի հունվարի 1-ից **54 (հիսունչորս)** հանրային պաշտպանի հաստիքները տեղաբաշխել հետևյալ կերպ՝
   1) Երևան քաղաքում՝ **28 (քսանութ)** հաստիք, որից 21 (քսանմեկ) հաստիքը՝ քրեական մասնագիտացմամբ, իսկ 7 (յոթ) հաստիքը՝ քաղաքացիական (վարչական, սահմանադրական) մասնագիտացմամբ.
   2) մարզերում՝ **26 (քսանվեց)** հաստիք՝ համաձայն հավելվածի:

2. 2019 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 21.11.2017թ. թիվ 455-Լ որոշումը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

15 նոյեմբերի 2018թ.
թիվ 395-Լ
ք.Երևան